Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության կողմից 2025 թվականի առաջին կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Քաղաքաշինության բնագավառ

Ներդրումային ծրագրեր՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվիրատվությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ԾԻԳ-ի կողմից կառուցվում է **Չիվայի միջնակարգ դպրոցը,** (հզորությունը 144 աշակերտ/տեղ, 20 կրթահամալիր-մանկապարտեզ),
Նախահաշվային արժեքը կազմում է 694 միլիոն 679 հազար ՀՀ դրամ,
2024 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի համաձայն «Կանժիլստրոյ» ՍՊ ընկերության՝ /կապալառու կազմակերպություն/ քաղաքաշինության բնագավառում տրամադրված շինարարության իրականացման լիցենզիայի գործողությունը կասեցվել է:
Նոր մրցույթով հաղթող է ճանաչվել «Բիդեք» ՍՊ ընկերությունը:
Նախահաշվային արժեքը կազմում է 322 միլիոն ՀՀ դրամ,
Ծրագրի սկիզբ՝ 24. 06. 2025թ., ավարտ՝ 24. 12. 2025թ.

ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ կառուցվում է **Գետափի միջնակարգ դպրոցը** (հզորությունը 288 աշակերտ/տեղ),
Ներկա պահին աշակերտների թիվը՝ 263,
Ֆինանսավորման աղբյուրը՝ Պետական բյուջե,
Ծրագրի սկիզբ՝ 2024թ., ավարտ՝ 2027թ.,
Նախահաշվային արժեքը կազմում է՝ 1 միլիարդ 876 միլիոն 216 հազար ՀՀ դրամ,
Հեղինակային հսկողություն՝ Բաբայան-ԼԱՏ նախագիծ ՍՊԸ,
Կապալառու կազմակերպություն՝ «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ և «Էն շին» ՍՊԸ ՀԳ,
Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ կառուցվում է **Արենիի միջնակարգ դպրոցը** (հզորությունը 432 աշակերտ/տեղ**),**
Ներկա պահին աշակերտների թիվը՝ 310,
Ֆինանսավորման աղբյուրը՝ Պետական բյուջե,
Ծրագրի սկիզբ՝ 2024թ., ավարտ՝ 2027թ.,
Նախահաշվային արժեքը կազմում է՝ 2 միլիարդ 200 միլիոն ՀՀ դրամ,
Կապալառու կազմակերպություն՝ «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ,
Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ կառուցվում է **Արփիի կրթահամալիրը** (հզորությունը 144 աշակերտ/տեղ,
40 կրթահամալիր-մանկապարտեզ)**:** Ներկա պահին աշակերտների թիվը՝ 148,
Ֆինանսավորման աղբյուրը՝ Պետական բյուջե,
Ծրագրի սկիզբ՝ 2024թ., ավարտ՝ 2027թ.,
Նախահաշվային արժեքը կազմում է՝ 1 միլիարդ 250 միլիոն ՀՀ դրամ,
Կապալառու կազմակերպություն՝ «Մավշին» ՍՊԸ.
Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ կառուցվում է **Քարագլխի կրթահամալիրը** (հզորությունը 200 աշակերտ/տեղ, 80 կրթահամալիր-մանկապարտեզ): Ներկա պահին աշակերտների թիվը՝ 76,
Ֆինանսավորման աղբյուր՝ Պետական բյուջե,
Ծրագրի սկիզբ՝ 2024թ., ավարտ՝ 2027թ.,
Նախահաշվային արժեքը կազմում է ՝ 1 միլիարդ 600 միլիոն ՀՀ դրամ,
Կապալառու կազմակերպություն՝ «Բիդեք» ՍՊԸ,
Շինարարական աշխատանքները ընթացքի մեջ են:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ կառուցվում է **Մարտիրոսի կրթահամալիրը** (հզորությունը 144 աշակերտ/տեղ, 80 կրթահամալիր-մանկապարտեզ)**:** Ներկա պահին աշակերտների թիվը՝ 59,
Ֆինանսավորման աղբյուր՝ Պետական բյուջե,
Ծրագրի սկիզբ՝ 2024թ., ավարտ՝ 2027թ.,
Նախահաշվային արժեքը կազմում է՝ 1 միլիարդ 250 միլիոն ՀՀ դրամ,
Կապալառու կազմակերպություն՝ «Մավշին» ՍՊԸ,
Շինարարական աշխատանքները ընթացքի մեջ են:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ նախատեսված է կառուցել **Արտաբույնքի կրթահամալիրը** (հզորությունը 144 տեղ),
Ներկա պահին աշակերտների թիվը՝ 112,
Ֆինանսավորման աղբյուր՝ Պետական բյուջե,
Ծրագրի սկիզբ՝ 2024թ., ավարտ՝ 2027թ.,
Նախահաշվային արժեքը կազմում է ՝ 1 միլիարդ 250 միլիոն ՀՀ դրամ,
Շինարարական աշխատանքները չեն մեկնարկվել: Համաձայն Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից տված տեղեկատվության, մոդուլային տիպի դպրոցի շենքի տեղակապումը չի համապատասխանում տարածքի հետ:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ նախատեսված է կառուցել **Վայքի թիվ 2 հիմնական դպրոց:** Հզորությունը 576 տեղ
Ներկա պահին աշակերտների թիվը՝ 769,
Ֆինանսավորման աղբյուր՝ Պետական բյուջե,
Ծրագրի սկիզբ՝ 2024թ., ավարտ՝ 2027թ.,
Նախահաշվային արժեքը կազմում է՝ 3 միլիարդ ՀՀ դրամ,
Շինարարական աշխատանքները չեն մեկնարկվել: Համաձայն Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից տված տեղեկատվության, մոդուլային տիպի դպրոցի շենքի տեղակապումը չի համապատասխանում տարածքի հետ:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ վերանորոգվում է **Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոցը**,
Նախահաշվային արժեքը կազմում է՝ 290,4 միլիոն ՀՀ դրամ,
Կապալառու կազմակերպություն՝ «Արման և Վահե Կոստանյաններ» ՍՊԸ,
Շինարարական աշխատանքները ընթացքի մեջ են: Իրականացվում են շենքի ներքին հարդարման և մասնաշենքի արտաքին մասի հիդրոմեկուսացման աշխատանքներ:
Շինարարական աշխատանքների իրականացման համար շինարարության թույլտվություն չի տրվում: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսված է 2025 թվականին:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ վերանորոգվում է **Մալիշկայի Մ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոցը**,
Նախահաշվային արժեքը կազմում է՝ 284 միլիոն ՀՀ դրամ,
Կապալառու կազմակերպություն՝ «Արման Շին» ՍՊԸ,
Շինարարական աշխատանքները ընթացքի մեջ են: Իրականացվում են դպրոցի շենքի ներքին հարդարման աշխատանքներ:
Շինարարական աշխատանքների իրականացման համար շինարարության թույլտվություն չի տրվում: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսված է 2025թվականին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն կողմից իրականացվում է Ջերմուկ համայնքի **Գնդևազ բնակավայրի Սբ Աստվածածին եկեղեցու ամրակայում, նորոգում, վերականգնում,**
Նախահաշվային արժեքը կազմում է 189.378.34 ՀՀ դրամ,
Կատարված են շինարարական աշխատանքների 30%-ը,
Ծրագրի սկիզբ՝18.07 2024թ., ավարտ՝30.08. 2025թ. ,
Շինարարական աշխատանքները ընթացքի մեջ են:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվում է **Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի բարեկարգում,**
Նախահաշվային արժեքը կազմում է 732.437.561 ՀՀ դրամ,
Կատարված են շինարարական աշխատանքների 95%-ը,
Ծրագրի սկիզբ՝ 18.08.2021թ., ավարտ՝ 20.07.2024թ: Շինարարության թույլտվությունը երկարացվել է մինչև 25.05.2026թ:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվում է **Ջերմուկ քաղաքի Ջրվեժին մոտեցման ճանապարհի և ճեմուղիների վերականգնում, կամրջակի, ավտոկայանատեղիի և մայթերի կառուցում,**
Նախահաշվային արժեքը կազմում է **467,211,206** ՀՀ դրամ,
Կատարված են շինարարական աշխատանքների 20%-ը,
Ծրագրի սկիզբ՝ 30.10.2023թ., ավարտ՝ 30.10.2025թ. :

Ընդհամենը ներդրումային ծրագրեր՝ 14.729.643.107 ՀՀ դրամ

Այլ ծրագրեր

Եղեգնաձոր համայնքի բյուջեի միջոցներով վերանորոգվում է «**Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեզ**» ՀՈԱԿ-ին պատկանող մասնաշենքը:
Ծրագրի սկիզբ՝ 15. 05. 2025թ. , ավարտ՝ 15. 09. 2025թ.,
Նախահաշվային արժեքը կազմում է՝ 41 միլիոն 250 հազար ՀՀ դրամ,
Կապալառու կազմակերպություն՝ «ՆԱՐ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ,
Շինարարական աշխատանքները ընթացքի մեջ են:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի նախաձեռնությամբ հիմնանորոգվել է **Վայքի 3-րդ մանկապարտեզի** մասնաշենքը,
Նախահաշվային արժեքը կազմում է 16 միլիոն 74 հազար ՀՀ դրամ,
Ծրագրի սկիզբ՝ 19. 11. 2024թ., ավարտ՝ 16. 05. 2025թ.,
Կապալառու կազմակերպություն՝ «1. 2. 3» ՍՊԸ,
Շինարարական աշխատանքներն ավարտվել են:

Պետական – մասնավոր համագործակցության շրջանակում և «Խորան» հիմնադրամի միջոցներով իրականացվել են Զորաց վանքի Սուրբ Ստեփանոս եկեղեցու, գավթի, պարսպապատերի և կցակառույց կացարանների ամրակայման, նորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքները,
Նախահաշվային արժեքը կազմում է 30 միլիոն 150 հազար ՀՀ դրամ,
Ծրագրի սկիզբ՝ 01. 05. 2024թ., ավարտ՝ 01. 05. 2025թ.,
Կապալառու կազմակերպություն՝ «Սայադյան Շին» ՍՊԸ,
Շինարարական աշխատանքները ավարտված են:

Ընդհամենը այլ ծրագրերով՝ 87.474.000 ՀՀ դրամ

Ընդհամենը մարզում՝ 14.817.117.107 ՀՀ դրամ

Ինքնակամ շինություններ բացահայտելու և հաշվառելու նպատակով կատարված շրջայցերի արդյունքում արձանագրել ենք թվով 19 ինքնակամ շինություն: Համայնքների հետ համատեղ քննարկել ենք օրինականացման ենթակա հաշվառված շինությունների օրինականացման գործընթացը և չօրինակացված և օրինականացման ոչ ենթակա շինությունների հետ կապված խնդիրները: Ապօրինի շինարարության արձանագրման և հաշվառման վերաբերյալ գործառույթը պարբերաբար իրականացնում ենք և կատարված աշխատանքների արդյունքները ներկայացնում:

2. Ջրամատակարարման, ջրահեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է թվով 7 ջրամատակարարման համակարգեր: Մարզում ընկերության բաժանորդների թիվը 9713 է, որից 806-ը իրավաբանական կազմակերպություններ: 2024 թվականի համեմատ բաժանորդների թիվը 2025 թվականի առաջին կիսամյակում ավելացել է 24 բաժանորդով, որից 10-ը իրավաբանական կազմակերպություններ:

Մարզի մյուս բնակավայրերի ջրամատակարարման համակարգերը շահագործվում են համայնքապետարանների կողմից:

3. Գազիֆիկացում

Վայոց ձորի մարզի 5 համայնքների 44 բնակավայրերից գազիֆիկացված է 17 բնակավայր: Այս բնագավառում առաջնահերթությունը մնում է չգազիֆիկացված բնակավայրերի գազիֆիկացումը: Միաժամանակ աշխատանքներ են տարվում ազգաբնակչության հետ այլընտրանքային էներգետիկ համակարգերից օգտվելու համար: Մարզում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի բաժանորդների թիվը 9422 է, որից 4464-ը բազմաբնակարան շենքերի բնակարաններն են, 4636 անհատական տներ և 322 իրավաբանական կազմակերպություններ: 2025 թվականի առաջին կիսամյակում տեղադրվել են 51 անվտանգության ազդանշանային սարքեր: Հաշվետու ժամանակահատվածում բնական գազի շահագործման ընթացքում արտակարգ դեպքեր չեն արձանագրվել:

4. Ճարտարապետության բնագավառ

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում վարչության կողմից ուսումնասիրվել և լիազոր մարմին է ուղարկվել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտիներում նախագծման թույլտվություն պահանջող, համայնքի ղեկավարների կողմից ներկայացված 13 քաղաքաշինական փաստաթղթերի

փաթեթներ: Ուսումնասիրման փուլում կասեցվել և լրամշակման է ուղղարկվել թերի փաթեթներ:

Կատարվել է բնակավայրերում հողի նպատակային նշանակության փոփոխության աշխատանքներ: Միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է տրամադրվել համայնքի ղեկավարների կողմից ներկայացված հողաշինարարական 5 փաստաթղթերի փաթեթներ:

Վարչության կողմից լիազոր մարմին է ներկայացվել ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառված ինքնակամ կառույցների օրինականացման 7 առաջարկների քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթներ, որից 2-ը ստացել է դրական պատասխան, իսկ 5-ը քննարկման փուլում է գտնվում:

Վարչությունը հաշվետու ժամանակահատվածում համայնքներից ստացել է հողամասի գործառնական նշանակության փոփոխության 7 առաջարկներ, որոնք ուսումնասիրվել, քննարկվել և տրվել է դրական եզրակացություն:

Աշխատանքներ է իրականացվել Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի միջնակարգ դպրոցի հողամասից մի մասի առանձնացման և պետության կողմից բուժական հաստատության կառուցման համար տրամադրման ուղղությամբ:

5. Ճանապարհաշինության բնագավառ

ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացնում են հետևյալ աշխատանքները:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ իրականացնում են՝

- /Մ-2/-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-ՀՀ սահման՝ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ91+600-կմ98+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ: /Ելփին հատված/
  Կապալառու՝ (կատարող) «Քարավան-11» ՍՊԸ,
  Տեխնիկական հսկողություն <<Հալդի Քոնսալթ>> ՍՊԸ,
  Սկիզբ՝ 05.05.2025թ., ավարտ՝ 05.11.2025թ.:
  Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1,116,960,000 ՀՀ դրամ:
- Հ-42, /Մ-2/-Զառիթափ-Նոր Ազնաբերդ-ՀՀ սահման /23,5կմ ճանապարհի ընդհանուր երկարությունը/, հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ9+500, /9,5կմ/ հատվածի միջին նորոգման աշխատանքներ:
  Կապալառու՝(կատարող) «Վասպուրականի ՃՇՇ» ՍՊԸ,
  Տեխնիկական հսկողություն «Ճանապարհային դեպարտամենտ»,
  Սկիզբ՝ 27.06.2025թ., ավարտ՝ 27.09.2025թ.:
  Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 362,001,000 ՀՀ դրամ:
- S-9-31,/Հ-42/(Զառիթափ)-Գոմք-Կապույտ /10,9կմ ճանապարհի ընդհանուր երկարությունը/ մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհի կմ0+600-կմ8+400, /7,8կմ/ հատվածի հիմնանորոգման աշխատանքներ: /գտնվում է մրցույթային փուլ/
- S-9-10,/Մ-2/-Զեղեա /6,5կմ ճանապարհի ընդհանուր երկարությունը/ մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ6+500, /6,5կմ/ հատվածի հիմնանորոգման աշխատանքներ: /գտնվում է նախագծային փուլ/

Գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով մշտապես կապի մեջ ենք ՃՇՇ ներկայացուցիչների հետ. իրականացվում են դիտայցեր՝ խնդիրներին տեղում ծանոթանալու և դրանց լուծման հնարավոր տարբերակները վերլուծելու նպատակով:

6. Հողաշինության բնագավառ

2025 թվականի հունվարի առաջին կիսամյակում համայնքներից հավաքագրել, մշակել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ենք ներկայացրել թվով 9՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի-3, ՊՆ-2 , ՀՀ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության-2, ՀՀ վիճակագրական կոմիտեյի, Ժողովուրդ Օրաթերթի, ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից պահանջված ինչպես նաև պետական վերահսկողության ծառայությանն ենք ներկայացրել 2022-2024թթ ընթացքում համայնքների կողմից օտարված հողերի վերաբերյալ տեղեկատվությունները:

ՀՀ մարզպետի աշխատակազմում քննարկել և ներկայացրել ենք ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ վիճակագրական կոմիտեյի, ՀՀ վարչապետի աշխատակազմի և քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակված օրենսդրական նախաձեռնությունների փաթեթների վերաբերյալ կարծիքներ:

Ըստ համայնքների ուսումնասիրել և մշակել ենք 2019-2024թթ-ի ընթացքում ՀՀ կառավարության 17. 09. 2009թ-ի 1066-Ն և կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29- ի թիվ 1920-Ն որոշման համաձայն, հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները :

Ուսումնասիրել ենք համայնքների կողմից ներկայացված՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ նշանակության հողերի օտարման վերաբերյալ ավագանու բոլոր որոշումները և տվել ենք համապատասխան կարծիք:

Ուսումնասիրել ենք Վայոց ձորի մարզի էներգետիկայի քաղաքացիական պաշտպանության պլանը, և կատարել ենք անհրաժեշտ փոփոխությունները:

Մասնակցել ենք ՆԳՆԱԻ և ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կողմից նախաձեռնած վարժանքներին:

Համայնքների կողմից ընդահանուր առմամբ ստացել ենք նպատակային և գործառնական նշանակության 57 հողաշինական գործ, որից 12–ը ստացել է դրական եզրակացություն, 6 հողաշինական գործ՝ բացասական, 18-ը գտնվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի քննարկման տիրույթում, 21-ը վերադարձվել է համայնքներն՝ լրամշակման:

Ուսումնասիրել և պատասխանել ենք 5 քաղաքացու դիմում բողոքներին:

Շրջայցեր ենք իրականացրել Եղեգնաձոր, Արենի և Եղեգիս համայնքներում, հայտնաբերվել են հողերի նպատակային օգտագործման 6 խախտում, թերությունների վերացման համար ձեռնարկել ենք համապատասխան միջոցներ, տրվել են թերությունների վերացման հստակ ժամկետներ: Ձեռնարկված միջոցառումների հետեվանքով 5-ին տրվել է դրական լուծում :

Քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ **Ա. Մարգարյան**

10. 07. 2025թ.